



“ԹՈՂ ՏՈՒԻՒ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒՎ. ԵՐ. 16.


ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆՊՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1901

ԹԻՒ 6

ՄՈՎՍԷՍ ԵՒ ԱՅՐՈՂ ՄՈՐԵՆԻՆ

Երիտասարդ մը երբեմն պէտք կ'ունենայ դաստիարակութեան երկու ընթացք կատարելու, մէկմէկու ետեւէ, որոնց երկուքն ալ իրենց բաժինն ունին զանիկա իր կեանքի գործին յարմարցնելու մէջ: Զոր օրինակ, եթէ անիկա բժիշկ պիտի ըլլայ, նախ գոյէճ կը մտնէ իր միտքը սրելու և ընդհանուր անդեկութիւններով լեցնելու համար, և յետոյ բժշկական դպրոց կ'երթայ, որպէս զի ստանայ այն մասնաւոր կրթութիւնը որուն պէտք ունի բժիշկ մը ըլլալու համար: Այսպէս ալ Մովսէս կրթութեան երկու ընթացք կատարեց, որոնց ամէն մէկը քառասուն տարի տևեց, Նախ, իբրև որդեգիր փարաւոնի աղջկան, վարժուեցաւ եզիպտացոց բոլոր ուսումներովը, եզիպտացիք Մովսէսի օրերը ամէնէն քաղաքական կրթութիւնն էին: Այնուհետև, իբրև փախստական և հովիւ, սորվեցաւ համբերութեան, խոնարհութեան և Աստուծոյ կամքին հպատակելու դասերը: Երբ անոր կրթութիւնը կատարեալ եղաւ, Աստուած կանչեց զանիկա անոր մեծ պաշտօնին: Աստուած երեցաւ բոցավառող մարեմիին մէջէն, որուն ճիշդ նշանակութեան մասին թէպէտ տարակոյս կայ, թերևս սա ըլլայ այն կրակը երկու զվաւուր բան կ'ընէ.



զրեթէ չենք ակնկալեր: Մովսէս, երբ հետաքրքրութեամբ մտեցաւ մարեմիին դիտելու, չէր խորհար թէ հոն Աստուծոյ պիտի հանդիպէր:

2. Աստուծոյ ներկայութեան նպատակն է մաքրել մեզ, ազատել մեր սիրտերը մեղքէ և պատրաստել իրեն բնակարան ըլլալու:

3. Երբ կը զգանք Աստուծոյ ներկայութիւնը, և մէկզի կը դնենք մեզքը որպէս զի հաղորդակցինք Անոր հետ, այն ատեն է որ մեր առջև կը պարզուի պարտականութեան ճամբան, ինչպէս եղաւ Մովսէսի՝ այրող մարեմիին դէպքին մէջ:

4. Ակնածութիւն և պատկառանք կը վայել մեզի երբ Աստուծոյ ներկայութեան առջև կը գտնուինք: Մովսէս կօշիկները սոքերէն հանեց ի նշան ակնածութեան: Այսպէս մենք ալ երբ կը գտնուինք Աստուծոյ տան

սպառել և մաքրել: Այսպէս նաև Աստուած մեր սիրտերուն մէջ իր ներկայութիւնովը կը սպառէ մեր ներսի դին գտնուած չարը և մեղ կը մաքրէ: Ինչպէս որ Աստուծոյ ներկայութիւնը ցուցուեցաւ կրակի օրինակով, նմանապէս Սուրբ Հոգիին ներկայութիւնը ցուցուեցաւ Պենտեկոստէին օրը կրակէ լեզուներու օրինակով:

Այս միջադէպէն սորվինք սա դասերը:

1. Աստուած մեզի մտ է երբ մենք

մէջ, կամ անոր առջև կու գանք աղօթելու համար, նայինք որ մեր դիրքը ակնածական և պատկառոտ ըլլայ, և մանաւանդ ակնածական զգացումով լեցուն ըլլան մեր սիրտերը:


ՈՐ ՏՂԱԲԸ ԿԸ ՅԱԶՈՂԻՆ
ՏՐ. Արնոտ, Անդղիոյ տղայոյ համբաւաւոր Բըկպի դպրոցին երևելի վարժապետը, անգամ մը ըսաւ թէ իր փորձառութեամբ հասկցած է թէ ստղոց մէջ եղած տարբերութիւնը

ու այնքան անոնց կարողութեանը մէջ կը կայանայ՝ որքան կարողութիւնը գործածելուն մէջ :” Ընդունելով հանդերձ թէ տղոց մէջէն ոմանք ուրիշներէ աւելի աղէկ ուղեղ և աւելի զօրաւոր մարմին ունին, սա գաղափարն ունեցաւ, իր երկար պաշտօնավարութեան միջոցին, թէ այն տղաք որ եռանդով և յարատևութիւնով կ’աշխատին իրենց դասերուն, ամէն տարի լաւագոյն վկայութիւնը ընդունած են և յետագայ տարիներուն մէջ իբրև օգտակար և ազնիւ անձինք ճանչցուած են : «Սրամիտ տղաք :” կ’ըսէր ան, սերբեմն կը հպարտանան իրենց կարողութիւններուն վրայ, շատ կը վստահին անոնց, և չեն աշխատիր իրենց բոլոր ճիգով : մինչ անոնք որ այդքան սրամիտ չեն, աւելի հակամէտ են իրենց կարողութիւնները ամբողջովին գործածել :” Այս խօսքը, զոր կը խօսի Անգղիոյ մեծագոյն ուսուցիչներէն մին ճանչցուած այն անձը, կ’արժէ որ ամէն տղու մտածութեան նիւթ ըլլայ : Տր. Արնոլտ տղաքը գրեթէ ունէ ուրիշ վարժապետէ ունի աղէկ կը հասկնար : Անիկա եղաւ Անգղիոյ ամենէն մեծ մարդոց մէկ քանիներուն բարբին և նկարագրին ձևակերպուելուն միջոց :

Այնպիսի տղաք որ անզուսպ կը համարուէին, անոր ազդեցութեան ներքեւ փոխուեցան և ուղիղ ընթացքի մէջ մտան : Պատանիներ, որոնց միտքը կամ մարմինը զօրաւոր չէր, կը քաջալերուէին և կ’արիւնքային անոր խնամքին ներքեւ : Պատճառն այն էր որ իրենց վարժապետը կ’ուսումնասիրէր ամէն մէկ տղի վիճակը, իբր թէ բուն իր տղան էր անիկա : Ոչ մէկ տղայ կրնար անտարբեր կենալ : Տր. Արնոլտի բարի սրտին և մարդասէր բնավորութեան առջև : Հասկըցուած էր թէ անիկա շարժանքով և ամիսներով ուշադրութեամբ կը մտածէր թէ պզտիկ մը ինչ մասնաւոր յատկութիւններ ունի և թէ ինչ ապագայ կրնայ ակնկալուիլ անկէ, որպէս զի գիտնար թէ ինչ ազդեցութիւն և կառավարութիւն ամենէն աղէկը պիտի ըլլար անոր օգտին համար : Անիկա մօր մը պէս էր իր փափուկ զգացումով, և իր ազնիւ անձ-

նավորութեան զօրութիւնը մշտնջենաւոր ներշնչում մըն էր իր աշակերտներուն : Անոնք կը հնազանդէին անոր, վասն զի կը սքանչանային անոր վրայ և կը սիրէին զանիկա : Այսօր ունան տղաք անոր խօսքերը պիտի գտնեն սիրալիր խրատներով և իմաստուն յորդորներով հարուստ : Եթէ անոր կարողութիւնները և կարողունան յորդորներով հարուստ և կարողունան յորդորները միտք պահուին, զօրաւոր և սրամիտ տղաք պիտի զգուշանան իրենց բնական ձիրքերուն վստահելէ, և վճատեալ տղաք պիտի տուաճնորդուին իրենքզիրենք բաղդատել իրենց աւելի տաղանգաւոր ընկերներուն հետ և պիտի յորդորուին աշխատասիրութեամբ դարձանել իրենց թերութիւնները :

զի զանոնք հազուեցնէ և կերակրէ, և համբերութիւնով կը հսկէ անոնց անկողինը քով երբ կը հիւանդանան : Տղաք, երբեք այսպէս թանկագին եղած էք ձեր մայրերուն : Եւ դուք ձեր կողմէն անոնց ինչ փոխարէն կ’ընէք : Ես կը ճանչնամ փոքրիկ տղայ մը, որ ըսաւ թէ երբ մեծնայ մարդ ըլլայ, պիտի գործէ իր մայրը հոգալու համար : Ասիկա աղէկ նպատակ է, և վստահ եմ թէ եթէ երկար տարին ձեր սիրելի մայրերը, դուք զանոնք պիտի հոգաք երբ ծերանան : Բայց մի սպասէք մինչև այդ ժամանակ : Հիմակու ընէ ցուցէք անոնց ձեր սէրը, և ո՛ր ատեն որ կրնաք օգնել անոնց իրենց տնական գործերուն մէջ, օգնեցէք ուրախութեամբ :



“ՇՍՏ ԽՈՐՈՒՆԿ ՁԵՆՂԵՐ”

Հինգ տարեկան տղայ մը անցեալ ամառ Ովկիանոսը տեսաւ առաջին անգամ : Առաջուց շատ բաներ պատմած էին անոր անչափելի խորութիւններուն վրայով, և երբ առաւօտուն կանուխ ծովեզերք տարուեցաւ, քանի մը վայրկեան ետքը իր հօրը քով վազեց, իր գիտին իր վրայ ըրած ազդեցութենէն աչքերը լարած : “Հայրիկ,” աղաղակեց, “Ովկիանոսը շատ խորունկ չէ եղեր, ես ձեռքս անոր մէջ խոթեցի և բռնեցի անոր տակի աւազը :”



ՄԱՅՐԵՐՈՒՆ ԳԱՆՁԵՐԸ

Շատ անգամ պատմուած է կողնելիա անուն համբաւաւոր Հռոմայեցի տիկնոջ մը վրայ, որ Հռոմայեցի ամենէն մեծ զօրավարներէն մէկուն աղջիկն էր, թէ երբ անգամ մը կնոջ մը այցելութիւնն ընդունեց, անիկա մեծ պարծանքով անոր ցուցուց իր բազմաթիւ գոհարեղէնները, կողնելիան հիացնելու համար : Կողնելիա սպասեց մինչև որ իր երկու տղաքը, Տիբերիոս և Գայիոս, տուն դարձան դըպրոցէն, և ըսաւ այն կնոջ, “Ահա իմ գոհարներս :” Այսպէս է իրողութիւնը ամէն ճշմարիտ մօր համար : Անոր զաւակները անոր աչքին իր ուրիշ բոլոր գանձերէն շատ մը աւելի թանկագին են : Եթէ տունը բռնկի, առաջին անգամ կը խորհի զաւակները ապահով տեղ մը դնել և անկէ ետքը կը նայի ազատել իր միւս գանձերը : Զաւակներուն սէրը ուրախութիւնով և սաստիկ աշխատիլ կուտայ անոր, որպէս

կիանոսը շատ խորունկ չէ եղեր, ես ձեռքս անոր մէջ խոթեցի և բռնեցի անոր տակի աւազը :”

Երբեմն մեծ մարդիկ ալ գրեթէ այսպիսի անտողի սխալներ կ’ընեն, անմիջապէս հետևութիւններ հանելով առանց աղէկ մտածելու և քննելու : Աստուած աչնչին վրայ շատ թեթեւ գիտութիւն ունեցող երիտասարդներէ լսած ենք խօսքեր, որոնցմով անոնք կը ջանան պզտիկցնել այն Գիրքին արժէքը : Այս կարգէ երիտասարդ մը մօտերս ըսաւ խմբակի մը առջև որուն մէջ գտնուողներէն շատը իրեն պէս անտողեակ էին Սուրբ Գիրքին, «Բաւական աղէկ գիրք մըն է անիկա, բայց վերջապէս ինչ կը պարունակէ որ . . . :” Եւ սկսաւ թեթեւ թեթեւ քննադատել խօսիլ անոր դէմ : «Գուք խնամով քննած ուսումնասիրած էք Գիրքը,” հարցուց ունկնդիրներէն մէկը, որ մինչև այն ատեն լուսկեցած էր, և սկսաւ քանի մը հարցումներ ընել երիտասարդին, թէ

ինչպէս անանկ դիւրին դիւրին հե-
տեւութիւններ հանած էր և վճիռներ
կու տար: Երիտասարդը կաս կարմիր
եղաւ և, «Ոչ, կը տեսնէք թէ ես շատ
ժամանակ ունեցած չեմ անոր վրայ
նայելու,» ըսաւ կակազելով:

Երբեմն կ'աճապարենք և անպա-
տիւ ոճով կը խօսինք շատ գովելի ան-
ձի մը վրայ: Թէպէտ մեր հանած հե-
տեւութիւնները քանի մը վայրկեան
տեսակցութենէն միայն ետեւ ըլլան,
բայց նորէն զանոնք վստահութիւնով
և վճռաբար կը յայտնենք շատ ան-
գամ: Այսպիսի մէկը փայլուն է, գը-
րաւիչ է, մասնաւոր հրապոյր մը ունի
իր վարմունքին մէջ: Ինչո՞ւ չըլլայ:
Մենք անձամբ տեսած ենք զանիկա
և գիտենք: Մենք մեր հանած
հետեւութիւններուն ուղիղ ըլլալու
մասին այնչափ վստահ ենք որ-
չափ այն հինգ տարեկան տղան, որ
Ատլանտեան Ովկիանոսին ցած ըլ-
լալը գտաւ և այնքան գոհունա-
կութիւն զգաց:

«ՊԱՏՈՒՆԱՆ ՄԸ ԲԱՏՈՒՆՅԱՒ»

Մխիթարութեան կամ խրատի
համար խօսուած խօսքերը շատ ան-
գամ անյաջող կ'եղին, ինչու որ
չեն խօսուիր ճիշդ պէտք եղած
ատենը: Հետեւեալ օրինակը կը
ցուցնէ թէ բուն պէտքին ատենը
խօսուած խօսքը ինչպէս կը հասնի
ուղղակի սրտին:


«Երբ իբր ութ տարեկան մա-
նուկ էի,» կ'ըսէ տիկին մը, «երե-
ւակայական հազարումէկ բաներէ
կը վախնայի շատ ուրիշ մանուկ-
ներու պէս: Կը վախնայի մութէն,
կը վախնայի մտածելով թէ ան-

կողմիս տակը ահաւեի բաներ կան: Կը
վախնայի թէ կարասիներուն ետեւը
սոսկալի բաներ կան: Մանաւանդ կը
վախնայի գոց դրան մը առջևէն անց-
նելէ, մինչև անգամ ցերեկ ժամա-
նակ, որ չըլլայ թէ սարսափելի արա-
րած մը յանկարծ դուրս ցաթկէ և
զիս ուտէ: Բոլոր այս բաները ներսս
կը պահէի մանուկներու սովորական
ըութիւնով: Բայց անգամ մը հայրս
դիպուածով տեսաւ զիս որ վազելով
անցայ գոց դրան մը առջևէն, երեսիս
վրայ սարսափի նշաններով: Հայրս
քանի մը իմաստուն հարցումներ ընե-
լով հասկցաւ թէ կը վախնայի: Մինչև
այսօր աչքիս առջևն է անոր սիրուն
դէմքը, գեռ կրնամ լսել անոր ա-
նուշիկ ձայնը, երբ զիս ծունկին վրայ
առաւ և իր ուժեղ բազուկով զրկեց
զիս և սեղմեց իր սիրով լի կուրծքին

վրայ և ըսաւ, «Աննա, ինչո՞ւ ատանկ
ըրիր, վախնալու բան չկայ: Երկնաւոր
Հայրը կը սիրէ քեզ. ան միշտ քեզի
հետ է:» Միևնոյն բանը շատ անգամ
լսած էի, բայց հիմա իբր թէ պա-
տուհան մը բացուեցաւ Աստուծոյ սրբ-
տին մէջ և ես ուսուցանուի մտքով
կոյն բոլոր վախս գնաց, և Աստուծոյ
մշտնջենաւոր ներկայութեան և խնամ-
քին վրայ համոզուի այն աստիճան
գոյացաւ իմ էութեանս մէջ, որ թէ-
պէտ կ'աղօտանայ ատեն ատեն, սա-
կայն երբեք իրապէս ջնջուած չէ ան-
կէ ի վեր:»

ԿԼԱՍԿՈՅԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Կլասկօ քաղաքը Լոնտոնէ ետքը



Բրիտանական կղզիներուն մէջ ամե-
նէն մեծ քաղաքն է, և 1893ին 695,876
բնակիչ ուներ, այսինքն՝ Սկոտլանդ
ամբողջ բնակիչներուն գրեթէ մէկ վե-
ցերորդը: Կլասկօ շատ մեծ է Էտին-
պուրկէ, Սկոտլանդ նախկին մայրաքա-
ղաքէն, բայց անկէ շատ քիչ հրա-
պուրիչ է: Այցելողները կը զարմանան
անոր մթնոլորտին ծուխով լեցուն ըլ-
լալուն վրայ, որուն պատճառն են այն
բազմաթիւ գործարանները որոնց մէկ
օրուան մէջ սպառած հանքածուխին
ամբողջ քանակութիւնը շատ մեծ
ըլլալու է: Բայց բրդեղէն, բամբակեղէն,
մետաքսեղէն, երկաթեղէն
ձեռագործ ապրանքներէն աւելի կա-
րևոր է նաւաշինութիւնը, որուն յատ-
կացուած գետինը շատ մղոններով կը
տարածուի ֆլայտ գետին եղերքը,
որուն վրայ շինուած է Կլասկօ: Աշ-

խարհիս մէջ ոչ մէկ ուրիշ տեղ այն-
քան շոգենաւներ կը շինուին որքան կը
շինուին Կլասկոյի մօտ սկայ նաւարան-
ներուն մէջ: Կլասկոյի ամենէն չափե-
կան շէնքերէն մին է Մայր եկեղեցին,
որուն նուիրագործումը տեղի ունեցաւ
1197ին: Հարկաւ առաջ կաթողիկ մայր
եկեղեցի էր, բայց Բարեկարգութեան
ատենը, 1560ին, Կաթողիկ արքեպիս-
կոպոսը Գաղղիա փախաւ: Աւելի մո-
լեռանդ բարեկարգիչներ, որոնք քան-
դած էին Սկոտլանդի մէջ շատ եկե-
ղեցիներ և վանքեր, միտք ունէին
մայր եկեղեցին ալ քանդել, բայց բա-
րեբաղդապէս քաղաքին արհեստաւոր
գասակարգը միաբանութեամբ արգի-
լեցին քանդումը: Հիմա այդ շէնքը
ազգային Երիցական եկեղեցիին
ձեռքն է, և կը համարուի Բրի-
տանական վաղեմի ճարտարապե-
տութեան շքեղագոյն օրինակնե-
րէն մէկը: և մենք կը յիշենք թէ
շատ ազդուեցանք անոր սիրուն
չափակցութենէն երբ 1883ին գա-
ցինք տեսնել զայն: Կլասկոյի մէջ
շատ մը ուրիշ խոշոր շէնքեր ալ կը
գտնուին: Կլասկօ Անգլիոյ պե-
տութեան ամենէն լաւ շինուած
քաղաքներէն մին կը կոչուի:
Բարեբաղդութիւն է որ ընտիր
շինուածանիւթեր կը գտնուին ա-
ւաղաքարի քարահանքերուն մէջ,
որոնք ամենն ալ քաղաքին բոլոր-
տիքն են:

ԳԱՄ ՄԸ ԵԻՏԱԿ ԿՐՆԱՔ ԶԱՐՆԵԼ

Կը կարծենք թէ մեր տղոց մէկը
այս հարցումը լսած ատեն կը թոթվէ
իր ուսերը և կը պատասխանէ, «Ինչ
տարբերութիւն կ'ընէ չկրնայս, ես միտք
չունիմ գամ զարնելը ապրուստիս մի-
շոց ընել:» Մինչև անգամ ենթադ-
րելով թէ նպատակ չունիս հիւս կամ
ատաղձագործ ըլլալու, կրնայ ըլլալ
որ կեանքիդ մէջ շատ անգամ պէտք
ունենաս գամ զարնելու, և մասնա-
ւոր պատճառ չկայ զանիկա աղէկ
չսորվելու: Ան որ գամ զարնելու ա-
տեն իր մատներուն կը զարնէ և գամը
կը ծռէ և յետոյ կը ստիպուի զանիկա
հանելու և շիտկելու, բաւական ժա-
մանակ կը կորսնցնէ, սիրտն ալ կը
նեղանայ: Եւ հաւանօրէն գործը կա-
տարելէն ետքն ալ սիրուն բան մը
պիտի չըլլայ ըրածը:

Գործեր կատարելու շիտակ կամ
ծուռ կերպին մէջտեղ շատ տարբե-
րութիւն կայ: Հաճոյք կայ գործ մը
աղէկ ընելուն մէջ և ոչ մէկը երբեք

հաճոյք կը զգայ կարկտաններ ձգելէ իր կատարած գործին վրայ: Այն տըղան որ գամ մը շտակ չկրնար զարնել, հաւանօրէն կարելի եղածին չափ քիչ գամեր պիտի զարնէ: Եւ եթէ մտածէ թէ այս մասնաւոր գործը «բաւական աղէկ» կը կատարէ, մինչև անգամ թէպէտ աղէկ չկատարէ ալ, այն նոյն կերպով պիտի մտածէ աւելի կարևոր բաներու համար ալ: Գամը շտակ կրնա՞ք զարնել: Եթէ չէ՞ք կըրնար, աշխատեցէ՞ք որ կարենաք, և ձեր անձերուն նկատմամբ զգացէ՞ք յարգանք, որ կրնայ նոր բան մը ըլլալ ձեզի համար:



ՐՈՊԻ ԻՆՉՊԼԵՍ ԱՋԱՏԵՅ ԻՐ ՀՕՐԸ ԿԵԱՆՔԸ

Նիւ վոյ Ամերիկեան թերթը կը պատմէ Նիւ Եորքի մարդու մը ութ տարեկան տղուն քաջութիւնը: Անոնց ամառանոց բնակարանը մօտ է լճի մը որուն մէջ հայր ու որդի ձկնորսութիւն կ'ընեն: Անցեալ տարի ամառը, երբ երկուքը ձուկ կ'որսային, նաւակը յանկարծ ցնցուեցաւ, և հայրը որ կայնած էր նաւակին ետևի կողմը, հաւասարակշռութիւնը կորսնցուց և կռնակի վրայ շուրն ինկաւ: Չուրն այդ տեղ ըման երեսուն ոտք խորութիւն ունէր: Մարդը լողալ չէր գիտեր, բայց տղան գիտէր: Ուրիշ նաւակ չէր տեսնուեր: Ճշիւր տղին սոսկաւմին բնական հետևանքը պիտի ըլլար: Բայց ոչ բառ մը ոչ հեկեկանք մը չփոթեցուց այն դուռը մագերով գլխուն արագ մտածութիւնը և կամ արևէն խանձուած փոքրիկ ձեռքերուն արագ գործողութիւնը: Բռնեց թիւրը և ալիքներէն տարուած նաւակը ետ բերաւ հոն ուր իր հայրը աներևութաւցած էր, «Երբ» կ'ըսէ հայրը, «քանի մը երկվայրկեան ետքը, որ ինձի տալիս մը չափ երեցաւ, գլուխ շուրէն դուրս ելաւ, տեսայ պղտորակ կերպարանքը որ բռնած էր թիւրը, և իր մանկական և մեռելի գոյնով երեսը ծռած էր անանկ անձկութիւնով և սոսկումով, և այնպէս կը նայէր որ չեմ կրնար երբեք մոռնալ: Կեցի, հայրիկ, ես քեզի կը հասնիմ, ահա կու գամ», ըսաւ, և ծռեցաւ և սկսաւ քաշել թիւրը և մէկ վայրկեանէն քովս եկաւ: «Կէս մը կողք և յոգնած, ջանացի նաւակը բռնել, և քիչ մնաց որ չըլէի զանիկա իմ անհետ թեթ ճիգովս, երբ անիկա իր ոտքը նաւակին կողին երկնցուց և այն կողմը նետուելով՝ իր փոքրիկ մարմնին բոլոր ծանրութիւնը հոն հաւաքեց և ձեռքը

ինձի երկնցուց: Չեռքէս բռնէ, հայրիկ, ես նաւակը անշարժ պիտի պահեմ, քեզ ներս պիտի առնեմ», ըսաւ: Եւ անոր օգնութիւնովը նաւակը ելաւ: Կեանքս ազատեցիր, Բոպի՝ ըսի անմիջապէս երբ կարող եղայ խօսիլ: Անոր երեսը մեռելական դեղնութիւն մը ստացած էր, և արցունքի երկու խոշոր կաթիլներ գլորեցան անոր սյուրբէն վար: Բայց սապէս պատասխանեց. «Ոչ, ես չէի ազատողը. ես բան մը չունիմ ատոր մէջ. դուն ազատեցիր ինքզինքդ»: Եւ այդ ժամանակէն մինչև հիմա տղան երբեք ուղած չէ լսել այդ դէպքին պատմութիւնը: Եթէ մէկը խօսի անոր վրայ, սենեակէն դուրս կ'ելլէ:»



ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ ԾԱՀԵՑԱՒ

Պարտութիւններէն շատը, զորոնք կը կրենք կուտելու ատեն մեր ներսին. ձին հետ, կիրքերու և ունակութիւններու հետ, անոր համար են որ կը ջանանք մինակ կուտիլ փոխանակ օգնութիւն խնդրելու Անկէ, որ միշտ պատրաստ է իր ոյժը շնորհել մեզի մեր ջանքերուն մէջ:

Հնդկաստանի մէկ քաղաքին գիշերօթիկ դպրոցներէն մէկուն մէջ տասնըմէկ սարեկան աղջիկ մը կար Մարգարիտ անունով, որ բարկացող ընտելութիւն մը ունէր, և շատ կ'աշխատէր զանիկա զսպելու համար: Օր մը երբ դպրոցական աղջիկներուն թափօրը կ'անցնէր դպրոց մանկու համար գալիթին մեծ երկաթապատ երկփեղկեան դռնէն, վարժուհին կը գիտէր զանոնք վերի յարկի մէկ պատուհանէն, ինչու որ կը սիրէր անոնց ուրախութեամբ, խօսելով խնդալով զբարոց դառնալը տեսնել: Յանկարծ դիտեց որ աղջիկներէն մէկը անհոգութեամբ դուռը գոցելու ատեն Մարգարիտի ձեռքը ճիւղեցաւ դրանք մէջ: Մարգարիտի սիրուն երեսը կաս կարմիր եղաւ բարկութենէն. և երբ պտղորակ բերանը բացուեցաւ, վարժուհին կարծեց թէ շատ մը սոգեղ և նախատական խօսքերու հեղեղ մը պիտի վազէր մասնաւորապէս միւս աղջիկին մեծ մօրը ուղղուած, ինչպէս սովորութիւն էր այդ տարօրինակ երկրին մէջ, երբ մէկը յետին աստիճան բարկանար մէկուն: Յանկարծ այն կարմիր շրթունքները ամուր մը դոցուեցան առանց բառ մը խօսելու, և Մարգարիտ մտածելով գնաց պարիսպին ուրիշ մէկ անկիւնը և իր վնասուած մատը կը չփէր: Քիչ մը

ետքը երբ Մարգարիտ հանդարտութեամբ նստաւ վարժուհին քով իրիկուան խօսակցութեան և աղօթքին համար, վարժուհին հարցուց, «Ինչպէս եղաւ որ դուն չնեղացար Նիւ Եորքի, երբ մատը ճիւղեց դրան մէջ:» «Ոհ, այնքան բարկացայ որ կրնայի անոր զլուխը պարիսպին զարնել շախախել, շատ կիրք եղած էի», պատասխանեց Մարգարիտ, այտերը նորէն կարմրած, նորէն միտքը գալով արկածը: «Բայց», աւելցուց յանկարծական անուշ և մեղմ ձայնով, «օրհնեալ Հոգին օգնեց ինձի շուտով միտք բերելու մեր դասն եղող համարը, և մտքովս քանի մը անգամ ըսի, «Ով Տէր, պահապան դիր իմ բերնիս, ու իմ շրթունքներուս դուռը պահպանէ: Եւ այսպէս ըրաւ ալ:»



ՄԻԱՅՆ ԱՂԻՍ ՄԸ ՈՒՐԻՇ ԱՂԻՍԻ ՎՐԱՅ

Տղայ մը մեծ շէնք մը կը դիտէր որուն համար գործաւորները աղիւս և շաղախ կը կրէին օրէ օր: «Տղաս», ըսաւ անոր հայրը, «կ'երևայ թէ աղիւս շարունակ կը դիտես: Կը խորհի՞ս սորվիլ այդ արհեստը:» «Ոչ», ըսաւ տղան, «կը խորհիմ թէ ինչ պզտիկ բան է աղիւսը, և ինչ մեծ տուններ կը շինուին անով, երբ աղիւս աղիւսի վրայ կը դրուի:» «Շատ ճշմարիտ է, տղաս, բնաւ մի մոռնար աշխիկա: Բանն այսպէս է ամէն մեծ գործերու մէջ ալ: Բոլոր քու ուսմունքդ դաս մը ուրիշ դասի մը վրայ աւելցնել է: Եթէ մարդ մը կարող ըլլայ քաշել ամբողջ աշխարհիս բոլորտիքը, պէտք է որ քայլի մը ետևէ քայլ մը առնէ: Բու ամբողջ կեանքդ մէկ վայրկեանի վրայ ուրիշ վայրկեան մը աւելնալով կը կազմուի: Կաթիլի վրայ կաթիլ աւելցնելով Ովկիանոսը կը շինուի:»

Ասկէ սորվէ մանր բաները չարհամարհել: Մի վնասիք մեծ աշխատութիւններէ: Անոնք կը դիւրանան եթէ մասերու բաժնուին: Չես կրնար լեռնէ մը անդին ցաթիկել, բայց քայլ քայլ միւս կողմը կրնաս անցնել: Ուստի մի վախնար դժուար գործերու ձեռնարկելէ: Սա խորհէ միշտ թէ այդ մեծ շէնքը յառաջ գնաց միայն աղիւսի վրայ աղիւս մը դնելով:»

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղուղի համար:

Ամերիկայի Միտինարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր Ճ. Ք. Կիրիւ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՅԱՊ ԳՕՍԱՅԱՆ
Ֆինանսներու Ետևուշու, Ամերիկան Խան